BSC BUSINESS SUPPORT CENTER

DigiSupport

CIPE CENTER FOR INTERNATIONAL PRIVATE ENTERPRISE

ՁԵՐ ԲԻԶՆԵՍԸ ԹՎԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ

www.bsc.am

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հարգելի՛ ընթերցող,

Սույն ուղեցույցը կազմվել է «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոնի (BSC) կողմից Միջազգային Մասնավոր Ձեռնարկատիրության Կենտրոնի (CIPE) աջակցությամբ իրականացվող «Թվային տնտեսության օրակարգի ձևավորում Հայաստանում» ծրագրի շրջանակներում՝ հայաստանյան միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների (ՄՓՄՁ-ների) համար:

Ծրագրի շրջանակներում մշակված ուղեցույցներն են՝

- Բիզնեսի թվային փոխակերպման ռազմավարության ուղեցույց
- Բիզնես գործընթացների թվայնացման գործիքներ
- Ձեր բիզնեսը թվային հարթակներում
- Առցանց վաճառքի հարթակներ
- Բիզնեսի թվային անվտանգության ուղեցույց

Վերոնշյալ 5 ուղեցույցները ամբողջությամբ մշակվել են հայերենով, հասանելի են www.bsc.am կայքում և սոցիալական էջերում անվճար օգտագործման համար:

Թվայնացման ծրագրի շրջանակներում իրականացված նախաձեռնություններին կարող եք ծանոթանալ այս հղումով՝ https://bsc.am/hy/digital-economy-in-armenia/

Ուշադրություն. խնդրում ենք հաշվի առնել, որ ուղեցույցում ներկայացված է 2023թ. օգոստոսի դրությամբ տեղեկատվություն, որը, հնարավոր է, ենթարկված լինի հետագա փոփոխությունների:

www.bsc.am

Երևան, 2023թ.

DigiSupport

«Բի էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոնի կողմից իրականացված հետազոտությունը ցույց է տալիս, որ չնայած այն հանգամանքին, որ 2022 թվականին հայաստանյան միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների (ՄՓՄՁ-ների) 66%-ը իրականացնում է թվային մարքեթինգ, նրանց միայն 22%-ն է իրականացնում պլանավորում և արդյունքների վերլուծություն:

Սույն ուղեցույցը նպատակ ունի ՄՓՄՁ-ներին տալու անհրաժեշտ նվազագույն գործիքներ սոցիալական մեդիայի տարբեր հարթակներում հրապարակումների արդյունավետ պլանավորման և բովանդակության վիզուալ ներկայացման համար:

Ի՞նչ կտա Ձեզ ուղեցույցը

- Տեղեկատվություն այնպիսի գործիքների մասին, որոնք կօգնեն պլավորել հրապարակումները սոցիալական ցանցերում,
- Թվային գործիքների և հարթակների ցանկ, որը կօգնի ստեղծել բովանդակություն (նկարներ, տեսահոլովակներ, տեքստեր):

Ու՞մ համար է նախատեսված ուղեցույցը

- Ուղեցույցը նախատեսված է հայաստանյան ՄՓՄՁ-ների համար: Ուղեցույցը առավել արդյունավետ կօգտագործի ընկերության ղեկավարը, մարքեթինգի թիմը կամ մասնագետը:

Ուղեցույցը բաղկացած է հիմնական 3 հատվածներից.

Եռամսյա պլանավորման ձևանմուշ 01

Շաբաթական պլանավորման գործիքներ 02

Բովանդակության ստեղծման գործիքներ 03

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԵՌԱՄՍՅԱ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՁԵՎԱՆՄՈՒՇ

Սոցիալական ցանցերում ներկայացվող բովանդակության նախապես պլանավորումն ունի ռազմավարական նշանակություն: Շատ կարևոր է, որ սոցիալական ցանցերում հրապարակումները համապատասխանեն ընկերության ռազմավարությանը: Սոցիալական մեդիայի բովանդակությունը նախապես պլանավորելը թույլ է տալիս ավելի ռազմավարական լինել Ձեր հաղորդագրությունների հարցում:

Պլանավորման միջոցով ընկերությունը կարող է հասնել իր ռազմավարական նպատակներին: Օրինակ, եթե ընկերության ռազմավարական նպատակներից մեկը շուկայում դիրքավորվելն է որպես էկո արտադրանք թողարկող ընկերություն, ապա սոցիալական ցանցերում հրապարակումները, դրանց համար ընտրված թիրախային խմբերը պետք է չհակասեն և համապատասխանեն նպատակին:

Պլանավորումը թույլ է տալիս պատկերացում կազմել մարքեթինգային բյուջեի և աշխատակազմի սպասվելիք զբաղվածության մասին: Խորհուրդ է տրվում առնվազն 3 ամսվա համար իրականացնել պլանավորում, որի համար կարող եք օգտագործել ստորև ներկայացված ձևանմուշը:

DigiSupport

Եռամսյակային նպատակները յուրաքանչյուր սոցիալական հարթակի համար

Հարթակ	Նպատակ	Թիրախային լսարան	Բյուջե	Պատասխանատու
Facebook				
Instagram				
YouTube				
LinkedIn				
TikTok				
Twitter				
Telegram				

DigiSupport

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Հրապարակումների ամենօրյա պլանավորումը թույլ է տալիս թիմի աշխատանքը դարձնել առավել արդյունավետ և կանոնավոր, մասնավորապես կարող ենք առանձնացնել հետևյալ առավելությունները.

1. **Հետևողականություն**. Սոցիալական մեդիայում կանոնավոր և հետևողական հրապարակումներ կատարելը կարևոր է լսարանի առավել բարձր ներգրավվածություն և հետաքրքրվածություն ապահովելու համար:

2. **Ժամանակի խնայողություն**. Սոցիալական մեդիայի բովանդակությունը նախապես պլանավորելը կարող է երկարաժամկետ հեռանկարում խնայել աշխատակիցների ժամանակը: Ժամանակից շուտ պլանավորելով՝ Դուք կարող եք խուսափել վերջին րոպեին բովանդակություն ստեղծելու անհրաժեշտությունից և հետևապես խուսափել սխալներ գործելուց:

3. **Ավելի որակյալ բովանդակություն.** Սոցիալական մեդիայի գրառումները նախապես պլանավորելը թույլ է տալիս ստեղծել ավելի որակյալ բովանդակություն: Դուք կարող եք ժամանակ հատկացնել անհրաժեշտ թեմաները ուսումնասիրելու, ռեսուրսներ հավաքելու և գրավիչ վիզուալներ կամ տեսանյութեր ստեղծելու համար:

Ստորև առանձնացրել ենք հրապարակումների պլանավորման և աշխատանքը առավել արդյունավետ դարձնելու մի շարք գործիքներ:

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ՁԵՎԱՆՄՈՒՇՆԵՐ

Գործիք	Նկարագրություն
monday.com	Կայքի միջոցով հնարավոր է կատարել հրապարակումների հետ տարվող աշխատանքների պլանավորում, թիմակիցների հետ աշխատանքի համակարգում և վերահսկողություն: Կայքն առաջարկում է մի շարք անվճար գործիքներ:
Trello	Trello-ն իր օգտատերերին հնարավորություն է տալիս աշխատել և համագործակցել թիմի անդամների հետ, իրականացնել նախագծերին առնչվող առաջադրանքներ: Օգտատերերը մի վայրում կարող են տեսնել պլանավորված հրապարակումների կատարման ընթացքը և պատասխանատուներին: Կայքի հնարավորությունների մեծ մասը հասանելի է անվճար:
Hubspot	Կայքն առաջարկում է աշխատանքի պլանավորման օրացույցների մի շարք ձևանմուշներ՝ ամբողջությամբ անվճար:
Clickup	Կայքն առաջարկում է աշխատանքի պլանավորման օրացույցների մի շարք ձևանմուշներ՝ ամբողջությամբ անվճար: Կայքում կարելի է արդյունավետորեն պլանավորել աշխատանքը, աշխատել ողջ թիմով միաժամանակ:
Smartsheet	Կայքն առաջարկում է աշխատանքի պլանավորման օրացույցների մի շարք ձևանմուշներ՝ ամբողջությամբ անվճար:
Excel Google Sheets	Աշխատանքի պլանավորման թերևս ամենապարզ գործիքներն են, որոնք կօգնեն Ձեզ համակարգել Ձեր աշխատանքը:

DigiSupport

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Սոցիալական մեդիայում օգտատերերի ուշադրության համար մրցում են բազմաթիվ ընկերություններ: Վիզուալները կարող են օգնել ընկերությանը առանձնանալ և գրավել օգտատերերի ուշադրությունը:

Վիզուալները կարող են օգնել նաև ամրապնդելու Ձեր ապրանքանիշի ինքնությունը և Ձեր բովանդակությունն ավելի ճանաչելի դարձնելու հաճախորդներին: Համապատասխան գույների, տառատեսակների և պատկերների միջոցով Դուք կարող եք ստեղծել ապրանքանիշի համահունչ և հիշվող պատկեր:

Բացի այդ՝ վիզուալները կարող են օգնել փոխանցելու բարդ տեղեկատվությունը պարզ և հասկանալի ձևով: Ինֆոգրաֆիկան, գծապատկերները և դիագրամները կարող են օգտագործվել տվյալների և վիճակագրության ներկայացման համար:

Ստորև աղյուսակում ներկայացրել ենք մի շարք կայքեր և գործիքներ, որոնց միջոցով կկարողանաք պատրաստել ընկերության հրապարակումները հեշտ և արագ կերպով՝ նվազագույն ռեսուրսներով:

DigiSupport

ԳՐԱՖԻԿ ԴԻԶԱՅՆ

Գործիք	Նկարագրություն
Canva	Գործիքի միջոցով կարող եք պատրաստել մի շարք նկարներ, տեսահոլովակներ (Instagram Reels), փաստաթղթեր, ներկայացումներ: Canva-ն տրամադրում է արդեն իսկ պատրաստ ձևանմուշներ՝ այդպիսով պարզեցնելով աշխատանքը: Կայքի հնարավորությունների մեծ մասը հասանելի է անվճար:
Slidesgo	Հարթակում ներկայացված են մի շարք պատրաստի ձևանմուշներ, որոնց միջոցով հնարավոր է պատրաստել ինչպես սահիկաշարեր, այնպես էլ սոցիալական ցանցերի հրապարակումներ:
Picsart	Հարթակը օգտատերերին թույլ է տալիս մշակել և խմբագրել նկարներ և տեսանյութեր, ինչպես նաև «կիսվել» դրանցով Picsart-ում և այլ սոցիալական ցանցերում: Հարթակն ունի անվճար և վճարովի գործիքներ:
VistaCreate	VistaCreate-ը գրաֆիկական դիզայնի անվճար գործիք է՝ հազարավոր անվճար ձևանմուշներով, որոնցից կարող եք ընտրել ամենահարմարը:
Pixlr	Pixlr-ը նկարների մշակման գործիքների հարթակ է, որի միջոցով հնարավոր է ձևափոխել, մշակել և խմբագրել լուսանկարները:
Piktochart	Piktochart-ի և Visme-ի միջոցով Դուք կարող եք ստեղծել պրոֆեսիոնալ տեսք ունեցող ինֆոգրաֆիկա, թռուցիկներ, պաստառներ, գծապատկերներ, տեսանյութեր և այլն: Մի շարք գործիքներ անվճար են:
Visme	
Easel.ly	Easel.ly-ն պարզ վեբ գործիք է, որը հնարավորություն է տալիս յուրաքանչյուրին, առանց դիզայնի փորձի, ստեղծել վիզուալներ (ինֆոգրաֆիկա, պաստառներ) և «կիսվել» դրանցով:

DigiSupport

ՆԿԱՐՆԵՐ

Գործիք	Նկարագրություն
Pinterest	Սոցիալական ցանցերի հրապարակումների համար նկարներ կարող եք գտնել նշված կայքերից: Հարթակներից օգտվելը անվճար է:
Researchgate	
Unsplash	
Pexels	

ՏԵՍԱՆՅՈՒԹԵՐԻ ԽՄԲԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Գործիք	Նկարագրություն
Renderforest	Հարթակում կարող եք ստեղծել պրոֆեսիոնալ տեսանյութեր, լոգոներ, մոդելներ, կայքեր և գրաֆիկա: Հարթակն ունի ինչպես անվճար, այնպես էլ վճարովի գործիքներ:
Lumen5	Lumen5-ը տեսահոլովակների ստեղծման հարթակ է, որն աշխատում է արհեստական բանականության միջոցով: Սա հնարավորություն է տալիս յուրաքանչյուրին, առանց ուսուցման կամ փորձի, հեշտությամբ ստեղծել գրավիչ վիդեո բովանդակություն րոպեների ընթացքում:
Biteable	Biteable-ը հակիրճ, գրավիչ, վիդեո բովանդակություն ստեղծելու առաջատար հարթակ է:
Filmora	Filmora-ն պարզ վիդեո խմբագիր է, որը թույլ է տալիս խմբագրել տեսանյութեր և աուդիոնյութեր:
Animoto	Animoto-ն տեսանյութերի ստեղծման հարթակ է, որը պատրաստում է տեսանյութեր լուսանկարներից, տեսահոլովակներից և երաժշտությունից՝ վերածելով վիդեոներկայացման:
Adobe Spark Video	Հարթակում կարող եք ստեղծել պրոֆեսիոնալ տեսանյութեր նկարների, այլ տեսանյութերի և երաժշտության միջոցով:

DigiSupport

«Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոն ՍՊԸ
ՀՀ, 0002, Երևան, Եկմալյան փողոց 6
+374 10 57 47 78 | +374 77 57 47 78
bsc@bsc.am | www.bsc.am